ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ց. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

ՌՄԴԷ =

28
f-93

749/ԺԱ.

ՔՐԻՍՏՈՆԻԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

28
Բ-93
4986
1627-ՀԿ

ԲՐԻՍՏՈԼԻԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ Ի ՊԷՏՍ ԴՊՐԱՏԱՆՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ
ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՐՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ՏԵԱՌՆ ԶԱՔԱՐԻԱՅ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

41444-68

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ
1846 = ՌՄԴԼԵ

4986-ش

Ը.Օ.Դ

Այս տետրակիս առաջին տպագրութիւնը հատած ըլլալով այս երկրորդ տպագրութեանս մէջ հարց պատասխանները աւելի աղէկ կարգի մը դրուելեան, հարցմունքները շատցնելով և ամէն մէկուն պատասխանը հանառօտելով, որ դպրատան ողոց միտք պահելը դիւրին ըլլայ. և ասկէց զատ՝ քանի մը բան ալ աւելի բացատրուելեան։

ՀԱՄԱՌՕՏ
ՎԱՐԺՈՒԹԻՒՆ,

ՄԷԿ ՏՂՈՒ ՄԸ

ԻՐ ԿԸՕՆԸ ԳԻՏՆԱԼՈՒ

ՎՐԱՑ

Հ. Մէկ մարդ մը քրիստոնեայ ըլլալու ինչ պէտք է։

Պ. Ամենասուրբ Երրորդութեան անունովը մկրտուիլը, և եկեղեցւոյ օրէնքը խորհուրդը ճանչնալը, և հաւատոյ հանգանակին մէջ ինչ որ գրուած է նէ, կատարեալ հաւատալու՝ և եկեղեցւոյ պատուիրանքները պահելու է։

Հ. Ամենասուրբ Երրորդութիւն ըսելով՝ ինչ կը հասկընանք։

Պ. Այն կը հասկընանք որ, Աստուած մէկ է՝ և երեք անձինք է, Հայր, Որդի, և Հոգի սուրբ։

Հ. Հայր և Որդի ըսածդ՝ մեր գիտցածին պէտն է։

Պ. Ո՛չ՝ մարմնաւոր զաւակներու պէս ծնած չէ Որդին, թէպէտ Հօրմէն ծոյ որդին է։

Հ. Օրինակ մը տուր՝ որ խելքիս հասնի։

Պ. Ինչպէս որ մարդուս միտքը խօսք կը ծնանի, որ իր ծնողը քանի որ կայ նէ՝ ինքն ալ կայ և միշտ կը ծնանի, առանց ալ Հայր աստուած իր Որդին յաւէլ քան զյաւիտեանս ծնելով՝ անբաժանելի է իրմէն, և կ'ըսեմք Հան աստուծոյ կամ Հանն աստուած. քանզի Հօր աստուծոյ բանն է, և ինքն ալ համագոյ Հօր յաւիտենականից Աստուած է։

Հ. Այդ ըսածդդ ինչով կը հաստատես։

Պ. Սուրբ Յովհաննէս աւետարանչին խօսքովը՝ «Ի սկզբանէ էր Հանն»։ Հանզի Հօր բան ըլլալով, քանի որ Հայր կայ նէ՝ Հանն ալ կայ։ «Եւ Հանն էր առ Աստուած». վասն զի մարմնաւոր ծնողդեան պէս չէ՝ որ ծնողէն զատվի. «Եւ Աստուած էր Հանն». իր ծնողէն զատ էութիւն և գոյութիւն չունենալուն համար. և այս պատճառիս համար համագոյակից Հօր կ'ըսվի, որ է Հօր աստուծոյ հետ մէկ գոյութիւն ունեցող։

Հ. Հոգին սուրբն ի՞նչ է։

Պ. Հոգին սուրբ ալ Հօր աստուծոյ հոգին կամ շունչն է, ուստի քանի որ Հայր կայ՝ Որդի ալ կայ. և քանի որ Հայր և Որդի կան, Հոգին սուրբ ալ կայ, որ Հօր և Որդւոյ հետ մէկ բնութիւն և էութիւն ունի, ուստի Հո

գին սուրբ ալ համապատակից կ'ըսվի Հոր և Որդւոյ։

Հ. Յիսուս Քրիստոս աստուած կ'ըսեմք նէ՝ այն ի՞նչ է։

Պ. Որդի աստուծոյ՝ և Բանն աստուած ըսածնիս է, որ Հոր աստուծոյ համապատակից յաւիտենական Աստուած ըլլալով, մարդս դժոխքէն և սատանայի գերութենէն ազատելու համար, հոգի միտք և մարմին առաւ, իր աստուածային անձին հետ միացոյց, կատարեալ մարդ եղաւ. չէ թէ՝ ինչպէս որ երբեմն հրեշտակները մարմին ունեցածի պէս աչքի կ'երեւան, և իրենք ճշմարիտ մարմին չունին, այլ Քրիստոսի մարմինը ճշմարիտ էր։

Հ. Ա՞ւրիկ ծնաւ։

Պ. Սուրբ Մարիամ կոյսէն ծնաւ, որ ասոր համար Աստուածածին կը խոստովանիմք. և Աստուածածին կոյս մնաց միշտ՝ որով և նոյն իսկ ծնունդը հրաշք էր, և ծնած տեղը Յիսուս անուն դրվեցաւ իրեն հրեշտակին պատուիրելովը՝ որ Փրկիչ ըսել է. և մարդկային բնութիւնն ալ աստուածային անձին հետ միանալովը, Քրիստոս ըսվեցաւ՝ որ Օծեալ ըսել է։

Հ. Քրիստոս մարմին առնելէն առաջը ի՞նչ ըրաւ։

Պ. Նուն իսկ իւր բնութեամբը արդարութիւն ըլլալով, և մարդս արդա-

բացընելու և մեղքէ ազատելու համար մարդ եղած ըլլալով՝ առանց մեղք մը գործելու, մարդոյս մեղաց պատիժ ըլլալու համար տրված բոլոր նեղութիւնները քաշեց, յոգնեցաւ, անօթեցաւ, տրտմեցաւ, լացաւ, և վերջապէս չարչարանք քաշեց, խաչվեցաւ։

Հ. Խաչին վրայ մեռնելէն ետքը ի՞նչ եղաւ։

Պ. Քրիստոս խաչին վրայ հոգին աւանդելէն ետքը, մարմնովը թաղվեցաւ, հոգւովը դժոխքը իջաւ, այն տեղը սատանային գերի եղած հոգիները գերութենէն ազատեց, երեք օրէն յարութիւն առաւ, քառասուն օր ալ աշխարհիս մէջ կեցաւ՝ և առաքելոց երեւցաւ, համբարձման օրը առաքելոց պատուիրեց՝ որ բոլոր աշխարհք պրտրտին իրեն աստուածութիւնը և քարոզած վարդապետութիւնները քարոզեն, հաւատացողները ամենասուրբ Երրորդութեան անունովը մկրտեն, զի վճիռ ըրած էր որ՝ չի մկրտվողը ապրայութիւն չի կրնար մտնել։

Հ. Մկրտութեամբ ի՞նչ կ'ըլլամք։

Պ. Մկրտութեան զօրութեամբը և շնորհօքը մեր սկզբնական մեղքէն սրբբվելով՝ եկեղեցւոյ անդամ կ'ըլլամք, ուստի եկեղեցւոյ անդամ չեղող մարդը, այսինքն՝ առաքելոց քարոզած, և

այն առեն էն մինչեւ մեղի հասած վարդապետութեանը չի հաւատացող և չի մկրտվող մարդը փրկութեան չի հասնիր և աբքայութիւն չերթար։

Հ. Ինանկ է նէ՝ մէկ մարդ մը մը կըրտվելէն ետքը, հարկաւ աբքայութիւն պիտի երթայ։

Պ. Չէ՝ չի մկրտվածը աբքայութիւն չերթալէն այն չի հետեւիր, որ մկրտվածն ալ աբքայութիւն երթայ. հարկ է որ եկեղեցին ինչի կը հաւատայ նէ, ինքն ալ անոր հաւատայ անկեղծ սրտիւ, և իր հաւատքը բարեգործութեամբ և առաքինութեամբ կենդանի պահէ։

Հ. Մկրտելը մեղք գործէ նէ ի՞նչ կ'ըլլայ։

Պ. Աստուծոյ շնորհացը դէմ ապերախտութիւն ըրած կ'ըլլայ՝ որովհետեւ Որդւոյն աստուծոյ մարդանալոյն, և իրեն փրկութեանը համար արիւն թափելուն և մեռնելուն դէմ, ինքը նորէն իր կամքը սատանային կը ծառայէ, ուստի պէտք է որ Աստուծոյ հետ հաշտվի։

Հ. Ի՞նչպէս կը հաշտվի։

Պ. Հարկ է որ իր մեղքերուն վրայ զղջայ, և զղջալէն ետեւ երթայ Աստուծոյ առաջը խոստովանածի պէս քահանային խոստովանի, որոնք որ Աստուած իր եկեղեցւոյն մէջը իրեն փո-

խանդրդ է դրեր այս բանիս համար։

Հ. Մինակ խոստովանիլը բաւական է մի։

Պ. Ոչ, այլ հաստատ դիտաւորութիւն մը պիտի ընէ միտքին մէջը, որ մէյմալ մեղքով Աստուած չի բարկացընէ, և խոնարհութեամբ քահանային դրած ապաշխարանքը յանձնառու ելլայ և կատարէ. և Աստուծոյ հետ հաշտելի, որ քահանային արձակումտ տալովը կ'ելլայ՝ և այս իշխանութիւնը Քրիստոս տրվաւ քահանայից՝ "Լրեթէ ու�մեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի "նոցա" (Յովհ. Ի. 23)։

Հ. Մեղաւորը միայն այսքանով Աստուծոյ հետ կը հաշտվի և արքայութեանը ժառանգ կելլայ մի։

Պ. Չէ. որովհետեւ մեղք քրիստոսի արդարութեանը հաղորդ ելլալն զրկված է. ուստի պէտք է՝ որ ապաշխարելն եռքը Քրիստոսի մարմինը և արիւնը առնելով, նորէն Քրիստոսի շնորհացը հաղորդ ելլայ, և առաջին արքութիւնը առնայ, և Քրիստոսի մարմնոյ և արեան հաղորդութիւնն ալ ամէն քրիստոնէի հոգեւոր փրկութեանը համար հարկաւոր է. և առնք ընելով եկեղեցւոյ հետ միացեալ կը մնայ։

Հ. Եկեղեցին ինչ է։

Պ. Եկեղեցին ճշմարիտ հաւատացե-

լոյ վիաւթիւնն է, որ ամէնքն ալ մէկ ճշմարիտ Աստուած կը դաւանին, և նոյն Աստուծոյ սորվեցուցած ճշմարիտ կը-ծնքը կ'ընդունին, և ճշմարիտ կրօնքը և անիկայ սորվեցրնող Աստուածը մէկ է, և եկեղեցւոյ գլուխը Քրիստոս մէկ է. անոր համար եկեղեցին ալ մէկ է։

Հ. Եկեղեցւոյ անհնազանդները ի՞նչ կ'ըսվին։

Պ. Եկեղեցւոյ սորվեցուցած հաւատքին չի հնազանդողները, և սուրբ գիրքը պատճառ բռնելով՝ իրենք իրենց գլխուն հաւատք հնարողները, և անոնց հետեւողները Հերետիկոս կ'ըսվին, և հերետիկոսութիւն եկեղեցիէն կը զատվին դուրս կը մնան, բայց զատ եկեղեցի մը ալ անոնք չեն բաղկացը-ներ՝ որքան շատ կ'ըլլան նենգ, քանզի Քրիստոս կ'ըսէ՝ «Եթէ եկեղեցւոյն ոչ լուիցէ՝ եղիցի քեզ իբրեւ զհեթա-նոս և զմաքսաւոր» (Մատթ. ԺԸ. 17)։

Հ. Եկեղեցին ինչո՞ւ սուրբ կ'ըսվի։

Պ. Եկեղեցին սուրբ է. քանզի սոր-վեցուցած ճշմարտութիւնները և սը-ւաց խրատները և խորհուրդները մար-դոց սրբելու համար են, և Քրիստոս որ է գլուխ եկեղեցւոյ՝ ամենայն սրբու-թեանց աղբիւրն է, ուստի ճշմարիտ սուրբ՝ ճշմարիտ եկեղեցւոյ մէջը կ'ըլ-լայ, եկեղեցիէն դուրս գտնվող մար-դոց որքան որ վարքը անմեղ և առաքի-

նի ըլլան նէ, սուրբ չեն կրնար ըլլալ. ուստի իբրև սուրբ վկայեալ հայրապետաց խօսքերն ալ կ'ընդունիմք, քանզի եկեղեցին անոնց սուրբ ըսելով՝ թէ հաւատոց դաւանութիւնին և թէ վարքերնին ընդունելի է, և մենք չընդունելով եկեղեցիէն զատուած կ'ըլլամք։

Հ. Եկեղեցւոյ խորհուրդները ի՞նչ են։

Պ. Քրիստոս եկեղեցւոյ անդամներուն ատեն ատեն մէկ մէկ կերպ շնորհք կուտայ եկեղեցւոյ մէջ իրեն փոխանորդ ձգածներուն միջնորդութեամբը, և այս շնորհքներս տալու արտաքին նշաններուն խորհուրդ կ'ըսեմք։

Հ. Քանի՞ են եկեղեցւոյ խորհուրդները։

Պ. Եօթն են, և առաջին խորհուրդն է Մկրտութիւն, որով մարդ եկեղեցւոյ անդամ կ'ըլլայ, և Քրիստոսի սուրբ հաւատքը կ'ընդունի։

Երկրորդ խորհուրդն է Դրոշմ, որով քրիստոնէական հաւատքը յայտնի քարոզելու քաջութիւն մը կ'ընտանայ։

Երրորդ խորհուրդն է Հաղորդութիւն, որ հացի և գինւոյ երեւոյթքով Քրիստոսի իսկական մարմինը և արիւնը քահանային ձեռքէն առնելով՝ որ նոյն իսկ Արքութիւնն է, անով կը սրբըվի։

Հ. Հաղորդութեան խորհուրդին

վրայ ինչ կրաւանեմք։

Գ. Թէպէտ հաղորդութեան խորհուրդին վրայ հայրէն և գինիէն զատ բան չերեւիր մեր աչքին, բայց Քրիստոսի կենդանի և կենդանարար մարմինն և արիւնն է՝ որ կը տեսնեմք հոգւոյ աչօք, և կը ճաշակեմք հաւատովք, և կը խոստովանիմք՝ որ հայրին ամէն մէկ փշրանքը, և գինիին ամէն մէկ կաթիլը, կատարեալ Քրիստոսի մարմինն և արիւնն է։

Հ. Մէկալ խորհուրդները որն են։

Գ. Զորրորդ խորհուրդն է Ոտքաշխարութիւն, որ մահացու մեղքէ կենդանութեան աղբիւրէն զատվելով մեռած հոգիները՝ այս խորհրդովս կը բժշկվին, իրենց մեղքէն կատարեալ սրտիւ զղջալով և քահանային խոստովանելով, և անոր խրատները պահելով՝ և հրամանը կատարելով, և արձակմանը արժանի ըլլալով, քանզի մինչև որ քահանայն ողորմութիւն մէջ՝ «Ես ձակեմ ըզքեզ» չասէ նէ՝ մեղքը թողութիւն չի գտանիր։

Հինգերորդ խորհուրդն է Պատարագ՝ որով եկեղեցւոյ հոգեւոր զաւակները շատնալու համար, եկեղեցին այրը և կինը կը պսակէ։

Վեցերորդ խորհուրդն է Հեռնադրութիւն, որ Քարոզ ալ կ'ըսվի, որով եկեղեցւոյ պէտքերը կատա-

բելու և աստուածային վարդապետու-
թիւնը ժողովրդեան քարոզելու՝ և
խորհուրդները կատարելու պաշտօ-
նեայներ կ'ընտրվին՝ ինչպէս են, կա-
թուղիկոսը, եպիսկոպոսը, քահանայն,
սարկաւագը, որ ասոնք իրարմէ վեր
աստիճաններ ունենալնուն համար,
վար աստիճան ունեցողը, իրմէ վեր
աստիճանի գործը կատարելու իշխա-
նութիւն չունի։

Նշանաւոր խորհուրդն է վերջին
Օծումն, որ ծանր հիւանդաց վրայ
քահանային աւետարան և աղօթքներ
կարդալն է. որով հիւանդը աստուա-
ծային շնորհօք իր նեղութիւններէն
կ'ազատի, և թէ որ թերթեւ մեղք մին
ալ ունի նէ՝ թողութիւն կը գտնէ։

Հ. Մահացու մեղքերն ալ այս խոր-
հրդովս կը թողվին մի։

Պ. Հոգին մեռցնող մեղքերը՝ որ
մահացու կ'ըսվին, առանց զղջման և
խոստովանութեան միայն այս խորհրդ-
ովս թողութիւն չեն գտներ, և թէ
որ զղջում ունին, բայց խոստո-
վանելու ժամանակ չեն ունեցեր՝ կամ
խոստովաներ են՝ և հոգւոյն կատարեալ
մաքրութեանը պէտք ըլլալու ապաշ-
խարանքը չի քաշած մեռեր են նէ, Ինքը
բիստոսի մահուանը և արեանը արդիւն-
քովը և անոր մահակից եղող սուրբե-
րուն արդիւնքովը, որ ասոնք ալ քրիս-

տոսի արդիւնքն են, եկեղեցին ասոնց մաքրութեանը համար աղօթելով կը մաքրին, և անով աղբայութեան ժառանգ կ'ըլլան. բայց թէ որ մահացու մեղք և անդեղջ մեռած են նէ, եկեղեցւոյ աղօթքը անոնք չի կրնար դատապարտութենէ ազատել։

Դ. Եկեղեցւոյ խորհուրդները քանի անգամ պէտք ըլլայ նէ՝ կը տրվի մի։

Պ. Անկրոնութիւնը ու Դրոշմը որ սուրբ Ներոնով կ'օծէ քահանայն մը կրկնուած ժամանակներս, մէկ անգամ պէտք է ամէն քրիստոնէի, և ոչ աւելի։

Ձեռնադրութեան կարգն ալ մէկ պաշտօն մըն է՝ որ մէկ մարդու միայն մէկ անգամ կը տրվի, որ եկեղեցիին խորհուրդները կատարէ։

Հաղորդութիւնը և Պատարագը՝ քանի անգամ որ մէկ քրիստոնեայ մը մեղք գործէ և զղջայ իր մեղքերուն վրայ, քահանային խոստովանելով, այնքան անգամ ալ պիտի ապաշխարէ և հաղորդվի։

Պատկը և վերջին Օծումն ալ՝ քանի անգամ հարկաւորի նէ՝ կը տրվի ամէն քրիստոնէի, և վերջին Օծման մէջ՝ ինչպէս որ անունը կը ցոյցնէ, հիւանդը իւղով օծելու սովորութիւնը՝ մեր եկեղեցին օրինաւոր պատճառով խափաներ է՝ որն որ ուրիշ աղգերը կ'ընեն։

Դ. Մեր կատարեալ և ճշմարիտ հա-

ւառաքեալքներդ մեկ տեղ ժողովված դրված կա՞ն մի, որ միտք պահելը դիւրին ըլլայ։

Գ. Այո՛ կայ՝ և Հանդանակ հաւատոց կ'ըսվի, որ ամէն օր եկեղեցին կը կարդացվի. և այս է.

" Հաւատամք 'ի մի Աստուած 'ի
" Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի
" և երկրի, երեւելեաց և աներեւու-
" թիւց։ Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիս-
" տոս Որդին աստուծոյ՝ ծնեալն յաս-
" տուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յէու-
" թենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ,
" լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ
" յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ
" արարած։ Նոյն ինքն 'ի բնութենէ
" Հօր. որով ամենայն ինչ եղեւ յերկ-
" կինս և 'ի վերոյ երկրի, երեւելիք և
" աներեւոյթք։ Որ յաղագս մեր մարդ-
" կան և վասն մերոյ փրկութեան իջեալ
" 'ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ,
" ծնաւ կատարեալապէս 'ի Մարիամայ
" սրբոյ կուսէն հոգւովն սրբով։ Որով
" էառ մարմին հոգի և միտ, և զամե-
" նայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտա-
" պէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ,
" խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր
" յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նստեալ
" մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։
" Պատրաստ է նովին մարմնովն և փառաւք
" Հօր 'ի դատել զկենդանիս և զմե-

„ռեալս, որոյ թագաւորութեանն ոչ
„գոյ վախճան։ Հաւատամք և ի սուրբ
„Հոգին՝ յանեղն և ի կատարեալն, որ
„խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և
„յաւետարանս։ Որ էջն ի յարդանուն,
„քարոզեաց զառաքեալն, և բնակե-
„ցաւ ի սուրբսն։ Հաւատամք և ի
„մի միայն ընդհանրական և յառաքե-
„լական Եկեղեցի. ի մի մկրտութիւն,
„յապաշխարութիւն, ի քաւութիւն
„և ի թողութիւն մեղաց։ Ի յարու-
„թիւն մեռելոց, ի դատաստանն յա-
„ւիտենից հոգւոց և մարմնոց, յար-
„քայութիւնն երկնից և ի կեանսն յա-
„ւիտենականս։

„Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ
„ոչ էր Որդի. կամ էր երբեմն, յոր-
„ժամ ոչ էր սուրբ Հոգի. կամ թէ՝
„յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ
„ասեն լինել զՈրդին աստուծոյ և կամ
„զսուրբ Հոգին. և թէ՝ փոփոխելիք
„են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզո-
„վէ կաթուղիկէ և առաքելական Ե-
„կեղեցի։

Ի որոց Հաւատոյնն մերմէ, ասացեալ։

„Իսկ մեք փառաւորեսցուք որ յա-
„ռաջ քան զյաւիտեանս, երկիրպա-
„գանելով որոյ Երրորդութեանն և
„միոյ աստուածութեանն Հօր և Որ-

„զ-ոյ և Հոգ-ոյն սրբ-ոյ, այժմ և միշտ
„և յաւ-իտեան-ս յաւ-իտեն-ից, ամէն „։

Հ. Հաւատքն-իս կենդանի ըլլալու համար կատարելու պատուիրանքները որո՞նք են։

Պ. Շրկու տեսակ պատուիրանք կան, մէկն է տասնաբանեայ պատուիրանքը, որով մեր բարքը աղէկ կ'ընենք, և դէշ կիրքերն-իս կը զսպենք. և երկրորդն է եկեղեցւոյ պատուիրանքը, որ ասոնք կատարելով եկեղեցւոյ ճշմարիտ անդամ ըլլալն-իս կ'իմացընենք։

Հ. Տասնաբանեայ պատուիրանքին առաջինը որն է։

Պ. „Սիրեացես զտէր աստուած քո „յամենայն սրտէ քումմէ „. և ասով կը պարտաւորիմք սիրել զԱստուած. երկրպագել և պաշտել. և անոր ըրած բարերարութիւնները, և բարերարութեան գործիքները և միջնորդները յարգել։

Հ. Ինչո՞ւ կը յարգենք սուրբ Խաչը։

Պ. Որովհետև մեր փրկութեան գործիքը եղաւ, և Քրիստոսի արիւնը վրան թափվելով մեր պարծանաց նշանը կը սեպենք. ուստի երկրպագութեամբ մեր առ Աստուած ունեցած սիրոյն համար կը յարգենք սուրբ Խաչը, և մեր ամէն գործոյն սկիզբը երեսնիս կը խաչակնքենք, յիշելով որ գործքերնուս բարի՝ Աստուծոյ հաճոյ

և ընդունելի ըլլալը Քրիստոսի խաչելութիւնն արդիւնքն է։

Հ. Սուրբ Աստուածածին կոյսը ինչո՞ւ կը պատուենք։

Պ. Կը պատուենք նաև սուրբ Աստուածածին կոյսը որ Քրիստոս Որդին աստուծոյ անկէց մարմին առնելով, մենք ըստ մարմնոյ ալ Աստուծոյ ազգակից ըլլալու շնորհքը սուրբ Աստուածածինէն ունիմք, քանզի Աստուածամեզի այս շնորհքս հաղորդելու միջնորդ անիկայ ընտրեց. և մենք անիկայ մեզի բարեխօս կը բռնենք՝ որովհետև ինքը գանձ շնորհաց է։

Հ. Սուրբերը ինչո՞ւ կը յարգենք։

Պ. Կը պատուենք սուրբերը՝ որ ի բենց քարոզութիւնովը և սուրբ վարքովը և նահատակութեամբը արիւն թափելով քրիստոնէական հաւատքը մեզի սորվեցուցին և հաստատեցին, և Աստուծոյ սիրելի ըլլալուին, անոնք մեռնելէն ետքն ալ Աստուծոյ քով կեն գանի են. և անոնց անմահ հոգւոյն բարեխօսութեամբը և աղօթքովը Աստուած մեզի շնորհքներ կ'ընէ, ուստի մենք ալ անոնք բարեխօս բռնելով Աստուծմէ այն շնորհքը կ'ուզենք. ինչպէս որ Քրիստոսի աշխարհք գալէն առաջ խրայէլացւոց թագաւորին մէկը կ'աղաչէր՝ «Ամէն Դաւթի սիրելւոյդ՝ մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ

„քումմէ „ . և Աստուած ալ շատ տեղ իր սուրբերուն բարեխօսութեամբը մեղաւորաց ողորմիլ կը խոստանայ ։

Հ. Սրբոց մասունքները ինչո՞ւ կը յարգեմք ։

Պ. Կը յարգեմք սուրբերուն մարմիններէն մնացած մասունքներն ալ. քանզի այն մարմնոյն էին սուրբերը, որ մեզի այն աղէկութիւնները ըրին. ուստի շնորհաց պահարան են այն մասունքները՝ ինչպէս որ առաքեալն ալ կ'ըսէ սուրբերուն համար, „Զթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի „. և թէ՝ „Օ՛ի մարմինք ձեր, տաճար են „Հոգւոյն . . . և չէ՛ք անձանց տէր „ (Ա. Կորն. Զ. 15. 19) ։ Եւ մեր անոնք յարգելը երախտագիտութիւն մըն է, մեր մեղքերուն թողութիւն գտնել և կամ փրկութիւն յուսալ չէ՝ թէպէտ և Աստուած երբեմն այս ոսկորներովս հրաշքներ ալ կ'ընէ. ինչպէս որ Զղեսէ մարգարէին ոսկորներուն դպած մեռելը ողջընցուց ։

Հ. Հրեշտակները ինչո՞ւ կը յարգեմք ։

Պ. Կը յարգեմք հրեշտակներն ալ այս մտքով՝ որ Աստուծոյ կամքը մեզի յայտնելու պաշտօնեայ են, և Աստուած մեզ անարատ փորձութիւններէն պահպանելու համար ասոնք վերակացու և պահապան դրած է. և

պիտի պղտիկ ողուն անգամ պահպան հրեշտակը հանապազ Աստուծոյ երեսը տեսութիւնը վայելելով, իր պաշտպանեալին համար ալ կը բարեխօսէ։

Հ. Սրբոց պատկերքը ինչո՞ւ կը յարգեմք։

Պ. Կը յարգեմք սրբոց օծեալ պատկերներն ալ. անոնց տէրը զգալի կերպով միտք բերելու, և պէտք եղած պատուները ընելու և զիրենք գովելու, և անոնց ունեցած ջերմեռանդութիւնը և սուրբ վարուցը նմանելու համար և օծմամբ անոնք կրօնական յարգութեան կը սեպհականեմք. ինչպէս որ Աստուած կը պատուիրէր իսրայէլացւոց՝ որ կրօնական բաներու համար գործածվելու անօթները օծեն։

Հ. Շրջորդ պատուիրանքը ո՞րն է։

Պ. "Մի առնուցուս զանուն Աստուծոյ քոյ ի վերայ անոտեաց"։ Ասով կ'արգիլէ Աստուծոյ անունը պարապ տեղը բերան առնելը, և սուտ տեղը կամ պէտք չեղած առեն՝ և իրաւտեղն ալ երդում ընելը. բայց երբոր հարկը պահանջէ կամ դատաստանի մէջ երդում ընելու՝ որով արդարութեան պատճառ պիտի ըլլայ երդումդ, կամ ուրիշ ասոր պէս բաներու, երդում ընելը արգիլեալ չէ։

Հ. Շրջորդ պատուիրանքը ո՞րն է։

Պ. "Պատուեա՛ զօր շաբաթուն"։

Այս շաբաթ օրը կիրակին փոխեցին նոր առաքեալները՝ Քրիստոսի փառաւոր յարութեամբը և Հոգւոյն սրբոյ գալստեամբը քրիստոնէից եկեղեցւոյ հաստատութեանը յիշատակին համար. ուստի այս օրս պէտք է քրիստոնէին բոլոր աշխարհային գործքերէն ետ կենալ, եկեղեցի երթալ, հասարակաց հետ աղօթել, աստուածային բանին քարոզութիւնը մտիկ ընել, եկեղեցւոյ սուրբ խորհուրդները առնել, և ուրիշ ասոնց պէս հոգեւոր բաներու պարապիլ. և որովհետեւ եղբայրսիրութիւնն ալ քրիստոնէից պարտականութիւնն է, սիրով բարեկամաց հետ տեսնվիլն ալ այս պատուիրանքիս դէմ չէ։

Հ. Ղորրորդ պատուիրանքը ո՞րն է։

Պ. «Մի առնիցես քեզ կուռս»։ Դուն քեզի կուռք չընչինես. ասել է՝ որ Աստուծոյ վայլած պատիւը, Աստուծմէ զատ ուրիշ բանի չի տաս. և թէպէտ հիմա հիչ մէկ բանի մը հաւատքով աստուածական զօրութիւն չեն տար քրիստոնեայները, բայց ոմանք արծաթը, և ոմանք իրենց փորը և կիրքը աւելի սիրելնուն համար կռապաշտի կարգը կ'անցնին. ինչպէս որ առաքեալը կըսէ՝ «Արծաթասիրութիւն՝ որ է կռապաշտութիւն», «Նոր որոց աստուած որովայնն իւրեանց է։

Հ. Հինգերորդ պատուիրանքը ո՞րն է։

Պ. «Պատուեա՛ զՀայրդ քո և զմայրդ»։ Այսով կը պարտաւորիմք մեր Հոգեւոր և մարմնաւոր ծնողքը շատ սիրով պատուել, որ մեր Հոգեւոր և մարմնաւոր կենացը Աստուծմէ մեզի շնորհեալուն միջնորդն են, մարմնաւոր գոյութիւնս մեր մարմնաւոր ծնողքներէն կ՚առնենք, և Հոգեւոր կեանքերնիս՝ որ Հաւատքով կ՚ըլլայ՝ Հոգեւոր ծնողքներնէս կ՚ընդունիմք։

Հ. Վեցերորդ պատուիրանքը ո՞րն է։

Պ. «Մի սպանաներ»։ Այսու և առաջ մէկը մենք իրաւք սպաննելիք նէ՝ մեզ պէտք մարմնաւոր իշխանութիւնը կ՚սպաննէ. բայց այս պատուիրանիս դէմ ուրիշ կերպ մեղանչել պէտք կայ, այսինքն՝ մարդ բամբասելով և զրպարտութիւնով անուն կոտրել, դէշ խօսքերով սիրտ ծակել, և ուրիշ սատոյ պէս բաներ՝ որով մեր եղբայրը կը տրտմի։

Հ. Յօթներորդ պատուիրանքը ո՞րն է։

Պ. «Մի շնար»։

Հ. Ութերորդ պատուիրանքը ո՞րն է։

Պ. «Մի գողանար»։ Այսով կը պարտաւորիմք ոխրոյմէն գաղտուկ բան մը չառնել, սուտ խօսելով խարդախութիւն չընել, ապէկիր գնով դէշ բան չի ծախել, մէկ բանին արժէքէն եօթել գիւնչառնել, դիւանալով դէշ սուակ չի քշել։

Հ. Իններորդ պատուիրանքը ո՞րն է։

պ. «Մի սուտ վկայեր»։ Այսով կը պարտաւորիմք չէ՛ թէ միայն դատաստանի մէջ, այլ և ուրիշ տեղեր ալ մէկուն համար թէ գէշ և թէ աղէկի՝ սուտ չի՛ զրուցել. և որովհետեւ մէկուն մրոքէն անցածը չեմք կրնար գիտնալ, մէկուն գիտաւորութիւնը դատելն ալ այս պատուիրանովս արգիլուած է։

հ. Տասնեւրորդ պատուիրանքը ո՞րն է։

պ. «Մի ցանկանար տան ընկերոջ քոյ, և մի՛ ամենայն ընչից նորա»։ Այսով կը պարտաւորիմք՝ մեր ընկերին և դրացիներին և ուրիշ մարդու ունեցածին աչք չի՛ զարնել։

հ. Այս պատուիրանքներուս հիմը և արմատը ո՞րն է։

պ. Բոլոր անձամբ և սրտիւ Աստուած սիրել՝. և ընկերդ քու անձիդ պէս սիրել՝. և ինչ բան որ չես ուզեր՝ որ քեզի ընեն ուրիշները, դուն ալ ուրիշներուն մի՛ ըներ. ասոնք ճիշդ կատարելով ամէն պատուիրանք կատարած կ՚ըլլաս։

հ. Եկեղեցւոյ պատուիրանքները ինչ են։

պ. 1. Կիրակի օրերը՝ և կիրակի սահմանեալ օրերը եկեղեցի երթալ՝ պատարագ տեսնել։

2. Ինչ որ չի՛ նէ՝ տարին անգամ մը ամէն մեղքը քահանային խոստովանիլ։

3. Խոնարհութեամբ և պարկեշտութեամբ ապրելոյն հիւղ ապաստարին տեղը հարստութիւն առնել. կամ թէ որ ձեռնհաս չըլլայ նէ՝ գոնէ ապրին անպատմ մը տեղը զատկին հարկաւորապէս։

4. Վիրակի և ոչն օրերը խառնութիւն չի բանալ և չի բանիլ։

5. Եկեղեցիին սահմանած շրջանը շաբթի՝ ուրբաթ օրերը, և շաբթու պահքերը՝ և մեծ պահքը սիրով պահել. առ գործքերով մեր եկեղեցւոյ հարազատ զաւակ ըլլալը կը ճանչցուին։

Հ. Ինչքա՞ն քանի կերպ է։

Պ. Սկզբնական մեղք մը կայ՝ որ Ադամէն մեզի ժառանգած է. անիկայ մեր մկրտելովը կը սրբուին. բայց մեր գործած մեղքերը երկուք են. ներելի և մահացու։

Հ. Ի՞նչ է ներելին, և ի՞նչ է մահացուն։

Պ. Ներելին թեթեւ մեղքերն են, որ կամ տկարութեամբ և կամ չի գիտնալով չար բան մը կը գործենք. իսկ մահացուն՝ ծանր ու մեծ մեղքերն են, որ կամօք և գիտութեամբ կը գործենք, որ մեր հոգին և շատ անպատմ մեր մարմինն ալ մեռցնելու պատճառ կ'ըլլան։

Հ. Մահացու մեղքերը քանի՞ հատ, և ի՞նչ են։

Պ. Յօթն, և սոսկալի են. հպարտ-

ութիւն. նախանձ. բարկութիւն. ծուլութիւն. ագահութիւն. ոսկրամոլութիւն. բղջախոհութիւն. և որքան մեղք կան նէ՝ ասոնցմէ կ'ելլեն։

հ. Ինչո՞ւ կ'լսվին մահացու։

պ. Ի՞նչ մեղք որ չարութեամբ կ'ըլլայ, և մարդ մեղք ըլլալը գիտնալով, և իրեն ալ նոյն մեղքը գործած ըլլալը գիտնալով չի զղջար, և որքան որ բանի տեղ չի դներ նէ, անիկայ այն մարդուն հոգեւոր կորստեանը պատճառ՝ և մահացու մեղք կ'ըլլայ. մարդ մը պատուիրանքի դէմ բան մը ընէ, բայց դէմ ըլլալը չի գիտնայ նէ, անիկայ նեղելի մեղք է։

հ. Ասոնց դէմ ի՞նչ դեղ կայ։

պ. Ամէն մէկին դէմ մէկ մէկ դեղ կան, որ եօթն առաքինութիւններ կ'լսվին. և ասոնք պարտաւոր եմք ընելու միշտ։

հ. Պարտութեան դէմ ի՞նչ պիտի ընեմք։

պ. Պարտութեան մեղքէն հեռու կենալ ուզեմք նէ՝ խոնարհ կ'ըլլամք միշտ մեր կենացը և ամէն գործերնուս մէջ, ուր որ գտնվելու ըլլամք. թէ և շատ բան գիտնամք՝ և շատ բաներ ալ ունենամք։

հ. Նախանձուն դէմ ի՞նչ ընեմք։

պ. Նախանձու մեղքէն հեռու կենալ ուզեմք նէ, միշտ եղբայրներս ու

ընկերներս այսպէս է որ սիրեմք. մեր ընկերին եղած թէ յաջողութիւնը և թէ ձախողութիւնը մերը սեպելով, անոր համար աղէկ խօսիմք, և ձեռքերնուս եկած աղէկութիւնը պիտի ընենք. ցաւիմք պիտի անոր ձախողութեանը վրայ, և խնդամք պիտի անոր աղէկութեանը վրայ, թէ և անոր վրայի եղած աղէկութիւնը մենք չուենենամք ալ նէ։

Հ. Խարկութեան դէմ ի՞նչ ընենք։

Պ. Խարկութեան մեղքէն հեռու կենալ ուզեմք նէ՝ հեզ կ'ըլլամք մեր ամէն գործերնուս մէջ, համբերատ ու խաղաղ կը վարվիմք բոլոր ընկերներնուս հետ, միշտ ներող գթութիւնով անոնց մեղի բրած ամէն մէկ պակասութեանը դէմ. թէ և մեր սիրտը ցաւցընէն, և մեզ բարկացընէն ալ նէ։

Հ. Օրուրութեան դէմ ի՞նչ ընենք։

Պ. Օրուրութեան մեղքէն հեռու կենալ ուզեմք նէ, միշտ կ'աշխատիմք աղէկութիւններ գործելու՝ ու հոգի նիստալ մեղքերէն սրբելու. թէ և ծանր ու դժուար ալ երևնայ մեզի։

Հ. Ագահութեան դէմ ի՞նչ ընենք։

Պ. Ագահութեան մեղքէն հեռու կենալ ուզեմք նէ՝ առատաձեռն պիտի ըլլամք, մեր ապրիլն ու մեր հայրենեաց Հոգեւոր և մարմնաւոր օգուտն համար՝ պէտք եղած ժամանակը, մեր կարողութեանը չափ տալով և ողորմութիւն տալով։

Հ. Արկրամոլութեան դէմ ի՞նչ ընեմք։

Պ. Արկրամոլութեան մեղքէն հեռու կենալ ուզեմք նէ՝ կը նայիմք որ մեր առողջութիւնը պահելու համար կերակուր ուտելու և խմելիք խմելու չափաւորութիւն ունենամք, ու եկեղեցիին արդիլած բաները այն օրը չուտեմք. քանզի ասիկայ՝ իրեն կոկորդին հեշտութիւնը կատարելէն զատ ուրիշ պատճառ չունենալով՝ իր փորը իրեն աստուած ընելու պէս է։

Հ. Ողջախոհութեան դէմ ի՞նչ ընեմք։

Պ. Ողջախոհութեան մեղքէն հեռու կենալ ուզեմք նէ՝ կը նայիմք որ ողջախոհ ըլլամք՝ ցանկութիւններս չափաւոր պահեմք՝ որ չըլլայ թէ հէմ հոգիներս հէմ մարմիններս ալ մեռցնելու պատճառ ըլլամք։

Հ. Վերջապէս ճշմարիտ աստուածահաճոյ ըլլալու համար ի՞նչ պիտի ընեմք։

Պ. Այս դեղերէն զատ՝ երբոր աս չորս բաներն ալ, մահը՝ դատաստանը՝ դժոխքը՝ և արքայութիւնը, մեր ամէն գործերուս մէջը միտք բերելու ըլլամք նէ՝ շատ տեսակ մեղքերէ ալ հեռու կը կենամք։

Հ. Աղդարոց կեանք և մեղաւորաց տանջանք ըսելով, ի՞նչ պիտի հասկընամք։

գ. Ա՛ղբարեներդ մեռանելի՛ն եղբա՛ր յաւիտենական երջանկութեան և առուծանութեան արժանի կ՚ըլլան Հոգւոյ, և մեզաւորներդ սատանայի՛ն կը մատնուին Հոգւոյ. և միշտ այն առանձնը նեղելի մեղքով կամ ապաշխարութիւնեն լմնան քաշելի՛ն առաջ մեռածներն ալ եկեղեցւոյ միջնորդութեամբ՝ Քրիստոսի արդարացուցիչ շնորհիւը որբեալ ըլլալով՝ անոնք ալ արքայութեան ժառանգ կ՚ըլլան։

հ. Յարութիւն մեռելոց ըսելով ի՞նչ պիտի իմանամք։

գ. Դատաստանի՛ն օրը Հոգիներդ նորի՛ն իրենց մարմինը առնելով՝ որ մեռնելով ձգեր էին, ամէն մէկին բարի և չար գործերը, Քրիստոս արդի՛ն Ա՛ստուծոյ կը դատէ. և արդարներդ Հոգւոյ և մարմնով յաւիտենական կեանքը վայելելու արքայութիւն կ՚երթան. և մեղաւորներն ալ յաւիտենական տանջանք քաշելու դժոխք կ՚երթան։

հ. Ա՛ստուծմէ մէկ բան մը ուզելու համար՝ ի՞նչ պիտի ընենք։

գ. Ինքնուրոյն թեամբ աղօթք ընելու ենք կատարեալ հաւատով, յուսով, և սիրով. և թէ որ ուզած բաներնիս մեզի օգուտ է՝ ասուած մեզի անխիկայ կը շնորհէ. և որովհետև մենք մեզի օգուտ ուզածը չենք գիտեր՝ որ ասուծմէ ուզենք, անոր համար

Քրիստոս տէրն մեր մեզի աղօթք սորվեցուց, վասն որոյ ամէն քրիստոնէի պէտք է որ ասիկայ սորվի և ըսէ։

Հ. Որն է այն աղօթքը։

Պ. Այս է, որ Տէրունական աղօթք կ'ըսվի։

" Հայր մեր որ յերկինս, սուրբ է-
" ղիցի անուն քո։ Եկեսցէ արքայու-
" թիւն քո. եղիցին կամք քո որպէս յեր-
" կինս և յերկրի։ Զհաց մեր հանա-
" պազորդ տո՛ւր մեզ այսօր։ Եւ թո՛ղ
" մեզ զպարտիս մեր, որպէս և մեք
" թողուցուք մերոց պարտապանաց։ Եւ
" մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ
" փրկեա՛ զմեզ 'ի չարէ. զի քո է ար-
" քայութիւն և զօրութիւն և փառք
" յաւիտեանս, ամէն "։

Հ. Աղօթքնիս ընդունելի չըլլալուն պատճառն ի՞նչ է։

Պ. Աղօթքի մէջ ըրած խնդիրներնիս՝ հարկ է որ հայր մերին մէջ գրանցված խնդրուածներուն մէկին համեմատ ըլլայ. չէ նէ ընդունելի չըլլար աղօթքնիս։

ՎԵՐՋ։

Р. U.
№ 7491

1846